

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՄԵԹՈՂԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

*մազհատրոսական թեզերի նախապատրաստման և պաշտպանության
կազմակերպման*

Երևան 2013

*Հաստատված է
Ակադեմիայի ռեկտորատի նիստում*

« 31 » հունվարի 2013թ.

Արձանագրություն № 138

Ռեկտոր՝ Ա. Լոքյան

Մ Ե Թ Ո Ղ Ա Կ Ա Ն Ց Ո Ւ Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

*մագիստրոսական թեզերի նախապատրաստման և պաշտպանության
կազմակերպման*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տվյալ մեթոդական ցուցումները մշակվել են մագիստրոսի որակավորման աստիճանի բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան: Սույն կարգի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրամանը և Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ռեկտորի 2012 թվականի մարտի 28-ի N 59-Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգը (քննարկվել և հավանության է արժանացել ՀՀ ՊԿԱ գիտական խորհրդի 2012 թվականի մարտի 27 -ի նիստում (արձանագրություն N 90)):

Մեթոդական ցուցումները բովանդակում են մագիստրոսական թեզերին ներկայացվող այնպիսի կարևորագույն պահանջներ, ինչպիսիք են՝ աշխատանքի բովանդակությունը, մագիստրանտի տեսական գիտելիքների խորությունը, նրա եզրակացություններ և առաջարկություններ անելու կարողությունը և այլն:

Մեթոդական ցուցումներում ներկայացված են մագիստրոսական թեզի շարադրման և ձևավորման պահանջները, պաշտպանության և գնահատման ընթացակարգերը:

1. Մագիստրոսական թեզերին ներկայացվող պահանջները

Մագիստրոսական թեզը բարձրագույն մասնագիտական կրթության երկրորդ եզրափակիչ փուլն է, որը պետք է բնորոշի ապագա մագիստրոսի ոչ միայն ընդհանուր ակադեմիական պատրաստվածությունը, այլ նաև ընտրված մասնագիտության ոլորտում նրա մասնագիտական կարողությունները:

Մագիստրանտի ավարտական որակավորման աշխատանքը (այսուհետ՝ մագիստրոսական թեզ) ավարտական տեսական ու կիրառա-

կան հետազոտական աշխատանք է՝ նվիրված կառավարման բնագավառին առնչվող արդի խնդիրների լուծմանը, որը բխում է մագիստրանտի պատրաստման հիմնական կրթական ծրագրի պահանջներից:

Մագիստրոսական թեզը պետք է՝

➤ ներկայացվի որպես բնագավառի արդիական հիմնահարցերից մեկին վերաբերող հետազոտություն, որում մագիստրանտը բացահայտում է իր տեսական գիտելիքները և գործնական ունակությունները, մասնագիտական բնույթի խնդիրներն ինքնուրույն լուծելու կարողություններ.

➤ բացահայտի մագիստրանտի կողմից գիտական և համակարգային վերլուծության մեթոդների յուրացման աստիճանը, ունակությունը՝ կատարելու տեսական ընդհանրացումներ և գործնական եզրակացություններ, հիմնավորված առաջարկություններ բնագավառի հիմնահարցերի լուծման վերաբերյալ.

➤ բացահայտի մագիստրանտի պատրաստվածության աստիճանը՝ ինքնուրույն աշխատելու հանրային կառավարման համակարգում.

➤ համապատասխանի նյութի տրամաբանված և հստակ շարադրման պահանջներին և հենվի հավաստի տվյալների ու փաստերի վրա.

➤ դրսևորի մագիստրանտի ունակությունը՝ կիրառելու տեղեկատվության որոնման, ընտրության, մշակման և համակարգման արդի մեթոդները, աշխատելու ունակությունը բնագավառի նորմատիվ-իրավական ակտերի հետ:

2. Մագիստրոսական թեզի թեմայի ընտրությունը

Մագիստրոսական թեզի թեմաներն ընտրվում են Ակադեմիայի ամբիոններում՝ հաշվի առնելով մագիստրանտների առաջարկները, եթե դրանք հիմնավորված են, համապատասխանում են մասնագիտությանը և չեն կրկնվում: Մագիստրոսական թեզի թեմաները նախօրոք քննարկվում և ընդունվում են համապատասխան ամբիոնի նիստում:

Միևնույն թեմայի ընտրությունը տարբեր մագիստրանտների կողմից արգելվում է: Եթե նույն թեմային հավակնում են մեկից ավելի մագիստրանտներ, ապա նախապատվությունը տրվում է նրանցից բարձր առաջադիմություն ունեցողին:

Յուրաքանչյուր ուսումնական տարում մագիստրոսական թեզի թեմաները ենթակա են վերանայման և չեն կրկնվում: Մագիստրոսական թեզի թեմաները նախօրոք քննարկվում են համապատասխան ամբիոնի նիստում:

Մագիստրանտի մագիստրոսական թեզի կատարման համար Ակադեմիայի մասնագիտական ամբիոնի կողմից նշանակվում է ղեկավար: Մասնագիտական ամբիոնի կողմից սահմանված մագիստրոսական թեզի թեմաները և նշանակված ղեկավարների ցուցակները ներկայացվում են Ակադեմիայի ռեկտորի հաստատմանը:

Մագիստրոսական թեզի ղեկավարից բացի կարող է նշանակվել խորհրդատու, եթե հետազոտությունը հարակից մասնագիտությունների սահմանում է:

3. Մագիստրոսական թեզի կառուցվածքը

1. Կառուցվածքային առումով մագիստրոսական թեզը պետք է կազմված լինի՝

- տիտղոսաթերթից,
- բովանդակությունից (ցանկ),
- ներածությունից,
- գրականության տեսությունից,
- աշխատանքի հիմնական մասից,
- եզրակացությունից,
- օգտագործված գրականության ցանկից,
- հավելվածներից՝ առանց էջակալման:

Ներածությունում անհրաժեշտ է ձևակերպել հիմնախնդրի իմաստը, հիմնավորել թեմայի արդիականությունը:

Աշխատանքի հիմնական մասը ներկայացվում է գլուխներով և ենթավերնագրերով: Պետք է տեղ հատկացվի միջազգային փորձի լուսաբանմանը:

Եզրակացությունը պետք է շարադրված լինի հակիրճ, ընդգրկի հիմնախնդրի արդի իրավիճակի գնահատականը և լուծման վերաբերյալ առաջարկությունները:

4. Մագիստրոսական թեզի ձևավորումը

Մագիստրոսական թեզը ներկայացվում է համակարգչային ձևավորման տեսքով՝ պահպանելով հետևյալ կանոնները:

Թուղթը՝ A4 չափսի,

Տառատեսակը՝ GHEA Grapalat 12, միջտողային տարածությունը՝ 1,5 միջակայք:

Ծավալը՝ ոչ պակաս 70 էջից (առանց հավելվածների):

Տեքստի ձախ կողմից լուսանցքի լայնությունը՝ 3 սմ, աջ կողմից՝ 1սմ, թղթի վերնի եզրաշերտի և առաջին տողի միջև տարածությունը՝ 2,5 սմ, թղթի ներքնի եզրաշերտի և վերջին տողի միջև տարածությունը՝ 2,5 սմ:

Էջանշումը՝ էջի ներքևում, մեջտեղում: Տիտղոսաթերթը համարվում է առաջին էջ, բայց չի էջանշվում (տե՛ս մեթոդական ցուցումների վերջում բերված օրինակը): Էջադրումը սկսել բովանդակության (ցանկի) էջից (տե՛ս մեթոդական ցուցումների վերջում բերված օրինակը):

Ծանոթագրությունները և մեջբերումները տեղադրվում են էջի ստորին մասում, հիմնական տեքստից բաժանվում են ուղիղ գծով և համարակալվում արաբական թվերով կամ քառակուսի փակագծում՝ նշելով գրականության ցանկում հերթական համարը և էջը:

Բովանդակության (ցանկի) մեջ հաջորդաբար նշվում են բաժինները (ներածություն, գլուխների վերնագրեր և ենթավերնագրեր, եզրակացություն, հավելվածներ և գրականության ցանկ): Յուրաքանչյուր վերնագրի դիմաց գրվում է այն էջի համարը, որից սկսվում է աշխատանքի համապատասխան մասը: Բովանդակությունը (ցանկը) դրվում է ներածությունից առաջ:

Գլուխները և ենթավերնագրերը տեքստում անհրաժեշտ է առանձնացնել (**B7**): Յուրաքանչյուր գլուխ անհրաժեշտ է սկսել նոր էջից:

Օգտագործված գրականության ցանկում (ըստ այբբենական կարգի) յուրաքանչյուր գրականության վերջում նշել էջերի ընդհանուր քանակը, իսկ հերթականությունը պետք է լինի հետևյալ կերպ (տե՛ս մեթոդական ցուցումների վերջում բերված օրինակը).

1. օրենքներ և այլ իրավական ակտեր,
2. հայերեն,
3. ռուսերեն,
4. այլ օտար լեզվով աղբյուրներ,
5. համացանցային կայքեր:

Հավելվածները, որպես կանոն, կազմված են աղյուսակներից, սակայն կարող են ընդգրկել նաև հաշվետվության այլ ձևեր, գծապատկերներ, գծանկարներ և այլն: Հավելվածներն աշխատանքին կցվում են այն հաջորդականությամբ, որոնք կիրառվել են տեքստում: Հավելվածը պետք է ունենա իր անվանումը, որն արտացոլում է դրա բովանդակությունը:

Մագիստրոսական թեզի հեղինակը ստորագրում է տիտղոսաթերթի վրա:

5. Մագիստրոսական թեզի ներկայացումը, պաշտպանությունը և գնահատումը

Մագիստրոսական թեզը դեկավարի կարծիքի հետ միասին ներկայացվում է հաշվառման, ապա՝ ուղարկվում թողարկող ամբիոն: Ամբիոնի վարիչն այն ուղարկում է համապատասխան մասնագետի՝ գրախոսման համար: Մագիստրոսական թեզը գրախոսականի և դեկավարի կարծիքի հետ միասին ներկայացվում է ուսումնամեթոդական վարչություն:

Մինչ մագիստրոսական թեզի պաշտպանությունը Ակադեմիայի մասնագիտական ամբիոնները կազմակերպում են նախնական պաշտպանություն՝ նախապես սահմանված ժամկետում: Նախնական

պաշտպանության հանձնաժողովը ստեղծվում և հաստատվում է Ակադեմիայի ռեկտորի կողմից:

Նախնական պաշտպանության նպատակն է օգնել մագիստրանտին շտկելու վրիպումները և պատրաստվել պաշտպանությանը՝ ճիշտ կազմակերպել զեկույցը՝ ընդգծելով մագիստրոսական թեզի կարևոր դրույթները, օգտագործել դիդակտիկ նյութերը, ստանալ հանրային ելույթի հմտություններ:

Դրական եզրակացության դեպքում մասնագիտական ամբիոնի կողմից մագիստրոսական թեզը երաշխավորվում է պաշտպանության:

Դիտողությունների առկայության դեպքում մագիստրանտը պարտավոր է լրամշակել մագիստրոսական թեզը:

Մագիստրոսական թեզի պաշտպանությունը կատարվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի առջև: Բացի հանձնաժողովի անդամներից, ցանկալի է, որ պաշտպանությանը մասնակցեն նաև գիտական ղեկավարը և գրախոսը:

Մագիստրոսական թեզի բովանդակությունը ներկայացնելու համար յուրաքանչյուր շրջանավարտին տրվում է մինչև 20 րոպե ժամանակ: Մագիստրանտը պետք է ներկայացնի աշխատանքի արդիականությունը, ուսումնասիրված հիմնախնդիրը, աշխատանքի համառոտ բովանդակությունը՝ հիմնական ուշադրությունը դարձնելով եզրակացություններին և առաջարկություններին: Մագիստրոսական թեզի պաշտպանության ընթացքում ցանկալի է օգտագործել աշխատանքը լուսաբանող գծանկարներ, աղյուսակներ, գծապատկերներ:

Մագիստրոսական թեզի բովանդակությունը ներկայացնելուց հետո հանձնաժողովի անդամներին շրջանավարտին հարցեր տալու և պատասխանների համար տրվում է 30 րոպե ժամանակ: Մագիստրանտը պատասխանում է հարցերին, որից հետո հանդես են գալիս գրախոսները (բացակայության դեպքում ընթերցվում է համապատասխան կարծիքը): Մագիստրանտը պարտավոր է պատասխանել գրախոսների դիտողություններին՝ համաձայնելով դրանց հետ կամ ներկայացնել հիմնավորված բացատրություն:

Մագիստրոսական թեզերի պաշտպանության և ամփոփիչ քննությունների արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար» գնահատականներով՝ Ակադեմիայում ընդունված գնահատման սանդղակով և հայտարարվում նույն օրը՝ ամփոփիչ առեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում:

Կրեդիտային համակարգով գնահատման չափանիշները հետևյալն են.

Ավանդական կրթական համակարգի գնահատական	Տառային նշագրումով գնահատական	Թվային արժեքը
Գերազանց	A ⁺	4.0
	A	4.0
	A ⁻	3.7
Լավ	B ⁺	3.3
	B	3.0
	B ⁻	2.7
Բավարար	C ⁺	2.3
	C	2.0
	C ⁻	1.7
Անբավարար	D	1.0
Կտրված	F	0
Անավարտ	I	-

Ամփոփիչ քննությունից «անբավարար» գնահատական ստանալը կամ ամփոփիչ քննությանը չներկայանալը չի գրկում շրջանավարտին մագիստրոսական թեզը պաշտպանելու իրավունքից, ինչպես նաև մագիստրոսական թեզի պաշտպանությունից «անբավարար» գնահատական ստանալը կամ մագիստրոսական թեզի պաշտպանությանը չներկայանալը չի գրկում շրջանավարտին ամփոփիչ քննություն հանձնելու իրավունքից:

Մագիստրոսական թեզը չպաշտպանած կամ ամփոփիչ քննությունը չհանձնած կամ «անբավարար» ստացած կամ մագիստրոսական թեզի պաշտպանությանը չներկայացած կամ ամփոփիչ քննությանը չներկայացած շրջանավարտին թույլատրվում է վերահանձնել (կրկնել) մագիստրոսական թեզի պաշտպանությունը կամ ամփոփիչ քննությունը

հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին: Մագիստրոսական թեզի վերահանձնման դեպքում շրջանավարտը կցվում է համապատասխան ամբիոնին և ստանում մագիստրոսական թեզի նոր թեմա:

Մագիստրոսական թեզի պաշտպանության և ամփոփիչ քննությունների հանձնաժողովների բոլոր որոշումները քարտուղարի կողմից արձանագրվում են արձանագրությունների հատուկ մատյանում: Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և նիստին մասնակցած անդամները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

_____ ուսուցում _____ թողարկում
_____ ամբիոն

Մագիստրոսական թեզի թեմայի անվանումը

Մ Ա Գ Ի Ս Տ Ր Ո Ս Ա Կ Ա Ն Թ Ե Զ

«_____» մասնագիտությամբ _____
մագիստրոսի որակավորման աստիճան հայցելու համար

Մագիստրանտ՝ (Ազգանուն, անուն, հայրանուն)

Ղեկավար՝ (Ազգանուն, անուն, հայրանուն, գիտական
աստիճան)

Ամբիոնի վարիչ՝ (Ազգանուն, անուն, հայրանուն, գիտական
աստիճան)

Երևան 2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԳԼՈՒԽ 1. ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	6
1.1.«Պետական կառավարում» հասկացությունը	6
1.2.Պետական իշխանության թևերը, դրանց կազմավորման սկզբունքները	15
ԳԼՈՒԽ 2. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ: ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	30
2.1.Պետական կառավարման հիմնախնդիրները և գործառույթները	30
2.2.Պետական իշխանության թևերը, դրանց կազմավորման սկզբունքները և փոխհարաբերությունները	42
ԳԼՈՒԽ 3. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ	51
3.1.Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման գործոններն ու գործողությունները	51
3.2.Ներքին անվտանգության ռազմավարությունը	63
3.3. Արտաքին անվտանգության ռազմավարությունը	69
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	72
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	75
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Օրենքներ և այլ իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն
2. «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենք
3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք
4. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք
5. «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենք
6. «Հարկերի մասին» ՀՀ օրենք
7. ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 25-ի «Մանկավարժական կամ վարչական գործունեությանը խոչընդոտող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» № 284-Ն որոշում
8. ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 1-ի «Հայաստանի Հանրապետության մշակութային տարածքների ճանաչման չափորոշիչները և մշակութային տարածքների ցանկը հաստատելու մասին» № 241-Ն որոշում

Գրականություն

9. **Ղանիելյան Գ.Բ.** Վարչական պատասխանատվության հիմնահարցեր, գիտաուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատ., Եր., 1999:
10. **Շղյան Ռ.Հ.** Վարչական սուլժեր, ԵՊՀ հրատ., Եր., 1999:
11. **Հարությունյան Ա.Շ.** «Եվրոպական Միություն», Երևան, 2005 թ.:
12. **Арутюнян Г.В.** Правовое регулирование таможенных платежей. Учеб.пособие. Юриспруденция, М., 2000.
13. **Барчукова Н.С.** Реферат на книгу: Жан Бер К., Тремо Г. Таможенное право. Париж, 1995.
14. **Воробьев Ю.А** Основы таможенного дела. Выпуск 4., М., 1995.
15. **Clive P., Hopkins J.** British International Law Cases. Vol. 2. London, 1973.
16. Electoral Management Design: The International IDEA Handbook. International Institute for Democracy and Electoral Assistance, Stockholm, Sweden. 2006.
17. **Konton M.** The Termination and Revision of Treaties in the Light of New Customary International Law. 1994. N. 4.

Համացանցային կայքեր

18. Wikipedia encyclopedia (<http://en.wikipedia.org/wiki/Elections>)